

Քլորափրիֆոս

Ի՞նչ է քլորափրիֆոսը

Քլորափրիֆոսը ֆոսֆորօրգանական միջատասպան նյութ է: Մաքուր քլորափրիֆոսը կազմված է սպիտակ կամ անգույն բյուրեղներից: Ունի նեխած ձվի կամ սխտորի հոտ: Պատկանում է թունաքիմիկատների վտանգավորության II դասին: Օգտագործվում է տարբեր տեսակի վնասատուների, ներառյալ տերմիտների, մոծակների, խավարասերների, կլոր որդերի (նեմատոդներ) դեմ պայքարում, ինչպես նաև բժշկական, սանիտարական և կենցաղային ախտահանման աշխատանքներում: Քլորափրիֆոսը որպես միջատասպան նյութ առաջին անգամ գրանցվել է 1965թ.-ին: 2006թ.-ին Միացյալ Նահանգների շրջակա միջավայրի պահպանության գործակալության կողմից այն վերագրանցվել է:



Ո՞ր արտադրանքներն են պարունակում քլորափրիֆոս

Քլորափրիֆոս պարունակող արտադրանքներն օգտագործվում են համարյա բոլոր գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների, ինչպես նաև կարմիր մրջյունների ու մոծակների դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով:

Միշտ հետևե՛ք արտադրանքի պիտակի ցուցումներին և քայլեր ձեռնարկե՛ք քլորափրիֆոսի ազդեցությունից խուսափելու համար: Եթե այնուամենայնիվ ենթարկվել եք քլորափրիֆոսի ազդեցությանը, անպայման ուշադիր հետևե՛ք ապրանքի պիտակի վրա նշված առաջին օգնության հրահանգներին:

Ինչպե՞ս է քլորափրիֆոսն ազդում վնասատուի վրա

Քլորափրիֆոսը կարող է վնասակար լինել՝ դրան դիպչելու, այն ներշնչելու կամ կուլ տալու դեպքում: Քլորափրիֆոսն արգելափակում է ֆերմենտը, որը վերահսկում է նյարդային բջիջների միջև փոխանցվող ազդանշանները: Երբ ֆերմենտն արգելափակվում է, նյարդային համակարգը չի կարողանում նորմալ կերպով ազդանշաններ ուղարկել: Սա հանգեցնում է նյարդային համակարգի գործառույթի խաթարման և, ի վերջո, վնասատուի մահվան:



Քլորափրիֆոս պարունակող թունաքիմիկատները ներկրվում են Հայաստան տարբեր առևտրային անվանումներով: Այս միջատասպան նյութի տևական կիրառման դեպքում վնասատու միջատները ձեռք են բերում պաշտպանունակություն (կայունություն) դրա նկատմամբ: Հետևաբար, պետք է խուսափել մշտապես միևնույն պատրաստուկի օգտագործումից:

Ինչպե՞ս են մարդիկ ենթարկվում քլորպիրիֆոսի ազդեցությանը

Մարդիկ կարող են ենթարկվել քլորպիրիֆոսի ազդեցությանն՝ այն կուլ տալու, ներշնչելու, մաշկի վրա կամ աչքերի մեջ ընկնելու հետևանքով: Դա կարող է պատահել քլորպիրիֆոս պարունակող թունաքիմիկատներով գյուղատնտեսական մշակաբույսերի սրսկումներ կամ տանն ախտահանման աշխատանքներ կատարելու ժամանակ: Մարդկանց համար վտանգավոր կարող է լինել նաև ջրհորի ջուրը, որը կարող է աղտոտված լինել քլորպիրիֆոսով, եթե ջրհորի շրջակայքում վնասատուների ոչնչացման նպատակով օգտագործվել է քլորպիրիֆոս:

Որո՞նք են քլորպիրիֆոսի կարճատև ազդեցության նշաններն ու ախտանիշները

Քլորպիրիֆոսն ազդում է մարդկանց, ընտանի և այլ կենդանիների նյարդային համակարգի վրա այնպես, ինչպես թիրախային վնասատուի վրա: Նշաններն ու ախտանիշները կարող են ի հայտ գալ թունաքիմիկատի ազդեցությանը ենթարկվելուց րոպեներ կամ ժամեր անց: Ազդեցության հետևանքները կարող են տևել օրեր կամ նույնիսկ շաբաթներ: Այս ընթացքում օրգանիզմը փոխարինում է նյարդային համակարգում քայքայված ֆերմենտները, որպեսզի համակարգը նորից կարողանա իր գործառույթն իրականացնել:



Քլորպիրիֆոսի փոքր քանակների ազդեցությունը կարող է առաջացնել թարտադրություն, արցունքակալում և թարտադրության ավելացում: Մարդիկ կարող են ունենալ գլխացավ, սրտխառնոց և գլխապտույտ: Բարձր մակարդակների ազդեցության հնարավոր հետևանքներից են փսխումը, որովայնի մկանային ջղաձգումները, դողը և թուլությունը, ինչպես նաև շարժումների համակարգման (կոորդինացիա)

կորուստը: Երբեմն առաջանում է լուծ, տեսողության մշուշում կամ մթագնում: Ծանր թունավորումների դեպքում ազդեցությունը կարող է հանգեցնել գիտակցության կորստի, միզապարկի և աղիների վերահսկողության կորստի, ցնցումների, շնչառության դժվարացման և կաթվածահարության:

Ի՞նչ է տեղի ունենում քլորպիրիֆոսի հետ՝ Ձեր օրգանիզմ ներթափանցելուց հետո

Քլորպիրիֆոսը, ներթափանցելով մարդու օրգանիզմ, շարժվում է դեպի մարմնի բոլոր մասերը: Հայտնվելով նյարդային համակարգում, քլորպիրիֆոսը կարող է այնտեղ մնալ շատ երկար ժամանակ:

Քլորպիրիֆոսի նկատմամբ երեխանե՞րն են ավելի զգայուն, թե՞ մեծահասակները

Գիտնականներն ուսումնասիրել են քլորպիրիֆոսի ազդեցությանը ենթարկված կանանց և նրանց նորածին երեխաների արյունը՝ ծնվելուց հետո երեք տարվա ընթացքում: Երեխաները, որոնց արյան մեջ

հայտնաբերվել է քլորափրիֆոս, ունեցել են զարգացման ուշացումներ և խանգարումներ: Քլորափրիֆոսի ազդեցությանը ենթարկված երեխաները նաև ունեցել են ուշադրության դեֆիցիտ և գերակտիվության համախտանիշ:

Ընդհանուր առմամբ, երեխաներն ավելի զգայուն են թունաքիմիկատների նկատմամբ, քան մեծահասակները: Դրա պատճառներից մեկն այն է, որ նրանց օրգանիզմները տարբեր կերպ են տրոհում թունաքիմիկատները: Թունաքիմիկատների ազդեցությունը երեխաների վրա ավելի հավանական է խաղի ժամանակ, քանի որ նրանք շատ հաճախ ձեռքերը տանում են իրենց բերանը:

Սննդամթերքի անվտանգության եվրոպական գործակալությունը, որը զբաղվում է թունաքիմիկատների ռիսկերի գնահատմամբ, հայտարարել է,



Երեխաները **քլորափրիֆոսի** ազդեցության նկատմամբ ավելի խոցելի են, քանի որ նրանց ուղեղը գտնվում է զարգացման փուլում:

որ քլորափրիֆոսը «պոտենցիալ» գենոտոքսիկ և նեյրոտոքսիկ ազդեցություն ունի մարդու օրգանիզմի վրա, մասնավորապես՝ երեխաների մոտ առաջացնում է նյարդային պաթոլոգիաներ (կյանքի առաջին տարիներին զարգացման զգալի ուշացումներ): Նրանք իրենց փաստարկները հիմնավորել են վերջին 20 տարվա ընթացքում կատարված գիտական հետազոտություններով:

Ի՞նչ է տեղի ունենում քլորափրիֆոսի հետ՝ շրջակա միջավայր ներթափանցելուց հետո

Քլորափրիֆոսի տրոհումը հողում կարող է տևել շաբաթներ կամ տարիներ: Հողում այն կարող է տրոհվել ուլտրամանուշակագույն ճառագայթների և հողում պարունակվող քիմիական նյութերի կողմից: Հողի ջերմաստիճանը և pH-ի մակարդակը նույնպես կարող են ազդել հողում քլորափրիֆոսի պահպանման ժամանակահատվածի վրա: Քլորափրիֆոսի տրոհումը թթվային հողում ընթանում է ավելի դանդաղ, քան հիմնային հողում: Քլորափրիֆոսը հողում հայտնվելուց հետո ամուր կպչում է հողի

մասնիկներին: Սովորաբար բույսերի արմատները քլորափրիֆոսը չեն կլանում: Դրա թափանցումը ստորերկրյա ջրերի մեջ հեշտությամբ տեղի չի ունենում: Քլորափրիֆոսը կարող է ողողվել գետերում կամ առուներում, եթե Էրոզիայի հետևանքով տեղի է ունեցել քլորափրիֆոսով աղտոտված հողի զանգվածի տեղաշարժ:



Բույսերի տերևների վրա կիրառվող քլորափրիֆոսի մեծ մասը գոլորշանում է, բայց որոշ քանակությամբ կարող է պահպանվել 10 - 14 օր: Բույսերը քլորափրիֆոսով մշակելիս, այն ներթափանցում է բույսերի հյուսվածքները: Կուտակվելով բույսերում, այն սննդային շղթայի միջոցով անցնում է մարդու օրգանիզմ՝ առաջացնելով ֆունկցիոնալ խանգարումներ և հիվանդություններ:

Քլորափրիֆոսի ֆիտոտոքսիկությունը կարող է դրսևորվել տերևների, ծաղիկների և բողբոջների

վնասվածքներով կամ այրվածքներով:

Քլորափրիֆոսը կամ դրա քայքայման արդյունքում առաջացած քիմիական նյութերը կարող են արտանետվել մթնոլորտ և երկար տարածություններ անցնել: Հետազոտողները քլորափրիֆոս են հայտնաբերել սենյակային օդում, փոշու մեջ, գորգերի և մանկական խաղալիքների վրա այն տներում, որտեղ օգտագործվել են քլորափրիֆոս պարունակող արտադրանքներ:

Կարո՞ղ է արդյոք քլորափրիֆոսն ազդել թռչունների, ձկների կամ վայրի կենդանիների վրա

Քլորափրիֆոսը չափազանց թունուկ է թռչունների շատ տեսակների, օրինակ՝ աղավնիների համար:

Այն չափազանց թունուկ է նաև ձկների և ջրային անողնաշարավորների համար, քանի որ օժտված է կենսակուտակման հատկությամբ, այսինքն՝ կարող է կուտակվել ձկների և այլ կենդանիների հյուսվածքներում, որոնք սնվում են ավելի փոքր ջրային կենդանիներով:

Քլորափրիֆոսը խիստ թունուկ է ոչ թիրախային միջատների, օրինակ՝ մեղուների համար: Այն կարող է առաջացնել մեղուների թունավորում՝ դրանով մշակումներ կատարելուց հետո մինչև 24 ժամվա ընթացքում:

Քլորափրիֆոսը կարող է թունուկ լինել նաև անձրևաորդերի համար՝ հողում ներմուծումից հետո մինչև 2 շաբաթ:



Սույն տեղեկատվական նյութը պատրաստվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ «Աղտոտիչների վերացման հարցերով միջազգային ցանց»-ի (IPEN) ֆինանսավորմամբ իրականացվող «Քլորափրիֆոսի հետ կապված իրավիճակը Հայաստանում» ծրագրի շրջանակում: